Դրանք գործարանային մեծաքանակ ապրանքներ ստացող տներ էին, որոնք իրենց գործակալներով և շարշիներով կապված էին գյուղերի հետ։ Գործակալների դեր էին կատարում կամ գյուղերում մանր առևտրականները, կամ շրջող գործակատարները։ Նրանք թե՛ գործարանային ապրանքների տեղերում ցրվողներ էին և թե՛ տեղերում բուրդ, կաշի, բոժոժ, գորգ և այլ տեսակի հումք և տնայնագործական իրեր հավաքողներ։ Այսպես առաջ էր գալիս տեղական կապիտալի խոշոր և մանր տերերի ռեալ միասնություն, որը սակայն չէր ստացել իրավական կերպարանք և չէր ձևավորվել որևէ կազմակերպչական եղանակով, առաջ բերելով իր այդ շերտի շահերի ներկայացուցիչ որևէ հասարակական մարմին[36]։ Այդ ռեալ միասնությունը անշուշտ դեր խաղաց Զանգեզուրի հասարակական և քաղաքական իրադարձությունների մեջ մանավանդ առաջին համաշխարհային պատերազմից հետո ծագած քաղաքացիական պայքարի տարիներին։

Այդ նորակազմ կապիտալիստական հասարակական շերտը XX դ. առաջին տասնամյակներում արդեն անցած էր իր զարգացման երրորդ փուլին՝ գիտության օգնությամբ իր սոցիալական դիրքը բարձրացնելուն։ Այդ շերտին պատկանող ընտանիքներից դուրս եկած երիտասարդությունը գրեթե ամբողջովին, սակավաթիվ բացառությամբ, զետեղվում էր նախ տարրական դպրոցներում և ապա մի խոշոր տոկոսով անցնում էր միջնակարգ դպրոցներն ու համալսարանները։ Այդ դասակարգային ծագում ունեցող անդամներով լրացվում էին անդրկովկասյան ինտելիգենցիայի շարքերը։ Դրանց միջավայրից դուրս էին գալիս պետական ստորին և բարձր հիմնարկների ծառայողներ, բժիշկներ, իրավաբաններ, ինժեներներ, ֆինանսիստներ և արդյունաբերական աշխատողներ։ Դրանք սակավ դեպքերում էին մնում Զանգեզուրի գավառական հիմնարկներում աշխատելու։ Մեծ մասը փոխադրվում էր Բաքու, Տփղիս, Գանձակ, Շուշի։

Առավելապես ոչ Զանգեզուրում կուտակված կապիտալն էր, որ XIX դ. վերջին քառորդից սկսած տեղավորվում էր պղնձահանքերի շրջանում, որտեղ Կատարի, Կավարտի և Հալիձորի գլխավոր հանքավայրերը մինչ այդ շահագործվում էին պրիմիտիվ ձևով կամ կալվածատերերի կամ գյուղական համայնքների ձեռքով։ Մելիքների ու բեգերի ժառանգների և համայնքների միջև այդ հանքերի շուրջը տեղի էին ունենում հաճախակի վեճեր, որոնք երբեմն փոխվում էին զինված ընդհարումների և վերջանում էին արյունահեղությամբ։ Այսպես, 1872 թ. Սարգիս-բեգ Մելիք-Փարսադանյանը սպանվեց այն ընդհարման ժամանակ, որը Հալիձորի պղնձահանքերի սեփականության իրավունքների շուրջը հույն կապալառուների դրդմամբ բռնկել էր Մելիք-Փարսադանյանների և հարևան Թուրք բեգերի միջև։ Գավառապետ Ստոլբովսկին պաշտպան էր դուրս եկել այդ բեգերի շահերին։

Բայց արդեն դարավերջին հանքերի շահագործումը կենտրոնանում էր խոշոր դրամատերերի ձեռքին։ Այստեղ դրամական ներդրումներ ունեին Խոջամիրյանները, Մելիք-Ազարյանը և Մելիք-Ղարագյոզյանը, տփղիսաբնակ Խաչատուր աղա Նազարբեկյանը, որը գործում էր Բեկլար-բեգ Թուրք կապալառուի օգնությամբ, և մանավանդ հույն Կոնդուրով եղբայրները, որոնք խոշոր բաժին ունեին նաև Ալավերդու պղնձահանքերի շահագործման մեջ։ Այդ դրամատերերը իրենց կառավարության միջոցին փորձում էին մտցնել մաս-

---

[36] Նման «Купеческая Управа»-ին։